

թիւն, 17-րդ դարու վերջերէն սկսած, ուղեց միջամտել քրդական ցեղապետական խռովութիւններուն ու Տիգրանակերտի մէջ հաստատեց ընդհանուր նահանգապետ մը, որ պիտի դառնար միջնորդ օսմանեան պետութեան եւ քրդական իշխանապետութեան միջեւ: Այս փաստական իրողութիւնէն յետոյ, Թուրքիա աստիճանական նուաճումներ ըրաւ եւ իրեն ենթարկեց շարք մը ցեղապետութիւններ:

Սակայն, գլխաւոր ցեղապետութիւնները իրենց կէս անկախ գոյութիւնը կը պահպանէին մինչեւ 19-րդ դարու սկզբները (1830-1847): Այս վերջին շրջանին, այսինքն՝ 1683-էն մինչեւ 1847 թուականի 164 տարիներուն, քրդական ներքին կռիւները աւելի աչքի կ'իյնային:

* * *

Օսմանեան տիրապետութենէն յետոյ, ինչպէս վերը համառօտակի պատկերացուցինք, քրդական իշխանապետութիւնները մինչեւ 1847 թուականը պահպանեցին իրենց կէս անկախ վիճակը: Անոնք գոհացան միայն այդքանով եւ շատ յաճախ դիմեցին զէնքի, երբ թուրքերը իրենց ոտնձգութիւնները առաջ կը տանէին:

Սասունը մնաց այդ կէս անկախ 8 սանձագներու մէջ եւ կրցաւ պահպանել իր համեմատական անկախութիւնը, երբեմն իր շրջակայ աւատապետներու հետ կռուելով, երբեմն ալ անոնց միանալով՝ ընդդէմ ուրիշ յարձակողներու: Բայց հետզհետէ քրդութիւնը ըստուարացաւ Խոյթ-Մոտրզանի, Գէնջի, Խիանքի շրջաններու մէջ, ինչպէս նաեւ Տաւրոսի հարաւային փէշերու վրայ, ու Սասնոյ հայկական իշխանապետութիւնը տկարացաւ: Ապա, օրինակ առնելով իր դրացի քրդական աշիրէթներէն, փոքրիկ իշխանութիւններու բաժնուեցաւ:

Նման իշխանական փոքրիկ նմոյշներ կային Տաւրոսեան լեռնաշղթայի երկայնքին վերայ, Մոկսի եւ Շատախի շրջաններուն մէջ եւս, որոնք կը գտնուէին Հէքիարի եւ Ճէզիրէի քրդական իշխանապետութեանց ազդեցութեան տակը: Տէրսիմի մէջ կային փոքրաթիւ հայ գիւղեր, Միրըզցիներ (Միրազեաններ, որոնցմէ ոմանք տակաւին կան), որոնք Տէրսիմի աշիրէթներու հետ հաւասար իրաւունքներ

կը վայելէին եւ քաջ կռուողներ էին: Մնացած հայութիւնը կը բնակէր Տէրսիմի ստորոտները տարածուող դաշտավայրերուն մէջ, զրկուած էր ամէն իրաւունքէ եւ կ'ենթարկուէր ցեղապետներու աւատապետական իրաւունքին: Տաճկահայաստանի միւս գաւառները՝ Թաթարական ծանր տիրապետութեան տակ արդէն ընկճուած՝ կ'անցնէին օսմանեան թուրքերու ձեռքը, ու այսպիսով կրկնակ լուծին տակ, գետնատարած ու ստրուկ՝ միայն կեղեքուելու համար:

16-րդ, 17-րդ եւ 18-րդ դարու Տաճկահայաստանի ժողովրդական շարժումներու, հայ ժողովրդի ներքին ապրումներու եւ ձգտումներու պատմութիւնը կը բացակայի կամ փըշրանքներ միայն կան, որոնք չեն լուսարաներ մեզ: Եւ կամ պիտի ընդունիք, որ այդ երեք դարերու ընթացքին Թուրքիոյ լուծին տակ ընկճուող հայ ժողովուրդը, թրքական եւ իսլամական բռնութեան փոշիի տակ ծածկուած՝ անմոռնչ՝ գետնատարած կեանք մը ապրած է:

Մէկ բան, սակայն, պայծառ կ'երեւի. այդ այն է, որ հայ ժողովուրդը ենթակայ ըլլալով միեւնոյն ժամանակ թէ՛ Թուրքիոյ լուծին եւ թէ՛ կէս անկախ քրդական իշխանապետութեանց, չէ կրցած օգտուիլ այդ երկիշխանութեան: Չկար աշխուժ գործունէութիւն մը, որ հայ ժողովուրդը պիտի դնէր տիրապետողներէն մէկուն կամ միւսին կողքը (Սասունը, որ չափով մը բացառութիւն կը կազմէ): Ընդհակառակը, մենք կը տեսնենք որ այդ կրկնակ լուծերը աւելի քան ճզմած են հայ ժողովուրդը, զայն զրկելով քաղաքական ամէն կորովէ: Այդ կարեւոր խնդրի մասին կ'անդրադառնանք եզրակացութեան հատուածին մէջ:

Հիմա, պրպտենք քանի մը պատմական իրողութիւններ, որոնք ցոյց կուտան, թէ հայերը 18-րդ դարու երկրորդ կէսին ձգտած են թօթափել օսմանեան լուծը եւ մտածած են գործակցութեան մը մասին, իրենց դրացիներու հետ:

Յովսէփ Էմին, իր կեանքի եւ գործերու ինքնակենսագրութեան մէջ, քանի մը տեղ կը յիշատակէ Մշոյ Ս. Յովհաննու վանքի Յովնան եպիսկոպոսի նամակներու մասին: Յովնան ե-